

ԱՐՑԱԽԵԱՆ ԶԱՐԹՕՆՔԸ

ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ 20 ՓԵՏՐ. 1988-Ի ՊԱՏՄ. ԱՔԹԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

Սարգարապատեան համաժողովրդական պայքարի բախտորոշ թուականէն ասդին, թերեւս միայն 1846-47 թուականներու մեծ ներգաղթը կրցեր էր հայութեան պատճառել այնպիսի ոգեւորութիւն, համընդհանուր այնպիսի նեցակցութիւն, որքան Արցախի վերակցման պահանջը, որ պաշտօնապէս եւ իրաւականօրէն բանաձեւուեցաւ Լեռնային Ղարաբաղի Մարզային Խորհուրդին կողմէ, 20 Փետրուար 1988ին Ստեփանակերտի մէջ կայացած քուէարկութեամբ: Համընդհանուր ոգեւորութիւն՝ որուն պատճառները որքան հոգեբանական՝ նոյնքան եւ աւելի առարկայական էին: Փաստօրէն, պատմական այդ աֆթով, հայկական հողային դատը, երկար տասնամեակներէ ետք առաջին անգամ ըլլալով, իր՝ թէկուզ մասնակի եւ բոլորովին առանձնաշատուկ մէկ մարզով, կը դրուէր լուծման որոշակի ուղի մը վրայ, կարելոր քայլ մը դառնալով հայ ժողովուրդի ազգային վերամիաւորման, կենսական հողային տարածութիւններէն մէկուն վերամիացման եւ մայր հայրենիք հզօրացման ճամբուն վրայ:

Լեռնային Ղարաբաղի խորհրդարանը ճշ ՄԱԿի Մարդկային Իրաւանց մէկ ենթայանձնախումբն էր, ճշ Եւրոպական Խորհրդարան եւ ոչ ալ ժողովուրդներու Մնայուն Ատեան մը. ան միջնորդ մարմին մը կամ մակարդակ մը չէր, այլ բո՛ւն իսկ իրաւատէրը, որ պարզ ու մեկին կը բանաձեւէր իր պահանջը, որուն ստիպումն էին պատասխանել թէ՛ Պաքուն, թէ՛ Երեւանը եւ թէ՛ Մոսկուան: Եւ մենք գիտենք թէ՛ այդ պահանջին ինչպէս պատասխանեցին Պաքուն, - ցեղասպանական արարքներով, - Երեւանը, - որոշ տատանումներէ ետք պաշտօնապէս ընդունելով զայն, - եւ Մոսկուան, - ի վերջոյ Լեռնային Ղարաբաղը վարչականօրէն իրեն կապելով: Այդ բանաձեւը քաղաքական ու պատմական անհրաժեշտ այն հիմքն էր, առանց որուն անօրինակ եւ հակականոնական պիտի ըլլար որեւէ պահանջ, տրուած ըլլալով որ նոյն՝ Ղարաբաղի Ազգային Խորհուրդն էր որ ատենին, 1921ին, ակամայ կը վաւերացնէր շրջանին՝ Խ. Ատրպէյճանի կազմին մէջ իրրեւ ինքնավար մարզ անցնելը, եւ, հետեւաբար, իրեն եւ միայն իրեն անկ էր բեկանել այդ որոշումը:

Անցնող ամիսներուն ընթացքին, Արցախեան պահանջատիրութեան փոթորկալի վերիվայրումներու առկայութեամբ, մեր մէջ յաճախ կատարուեցան հարցադրումներ՝ այդ պահանջին ներկայացման համար ընրուած

ժամանակին յարմարութեան շուրջ, մանաւանդ նկատի ունենալով խորհրդային ղեկավարութեան նոր քաղաքականութեան՝ Փերեսթրոյճայի տակաւին արմատաւորման կարիքը: Ու թէեւ ճիշդ է՝ որ քարոզչական ու մանաւանդ քաղաքական-դիւանագիտական տեսակէտէ Արցախեան պահանջատիրութիւնը մեզ գտաւ բոլ ըովին անպատրաստ վիճակի մէջ, սակայն այդ հանգամանքն իսկ կը փաստէ, որ պահանջատիրական այդ պոթկումը տարբերային էր իր հուլիսամբ, եւ տարբերային որեւէ շարժումի նման ենթակայ չէր կողմնակի հաշիւներու եւ ճշգրիտ հաշուարկումներու: Ատրպէյճանական ձուլումի եւ անէացման քաղաքականութեան ալ չդիմանալու, այլեւս նահանջելու տեղ չունենալու գիտակցութեան ծնունդն էր այդ պահանջը, որուն սկիզբէն մինչեւ վերջ կառչած մնաց Արցախի հայութիւնը, անխախտ եւ անխառն պահելով զայն, կողմնակի՝ եւ հարցին հետ անմիջական կապ չունեցող այլ խնդիրներով չձանրաբեռնելով զայն, ինչպէս եղաւ, դժբախտաբար, Երեւանի եւ այլ վայրերու մէջ:

Հայ քաղաքական միտքն ու մամուլը տակաւին երկար ատեն պիտի վերլուծեն Արցախեան միամեայ պայքարին դասերը, աւելի լաւ նախապատրաստուելու համար այդ պայքարի նոր հանգրուանին, որ ստեղծուեցաւ Խ. Միութեան Գերագոյն Խորհուրդի 12 Յունուար 1989ի որոշումով: Եւ անկասկած, պայքարի նոր միջոցներ եւ ուղիներ պիտի գտնուին՝ աւելի արդիւնաւէտութեամբ օգտուելու համար անցումային եւ նպաստաւոր այս կացութենէն, ի վերջոյ այդ անցումը դէպի վերջնական նպատակակէտ առաջնորդելու համար: Այսուհանդերձ, բացայայտ իրողութիւն է որ, ընդհանուր գնահատումով մը, յաջող եղաւ այդ պայքարը մեր ժողովուրդին համար:

Առաջին հերթին՝ այդ պայքարը ծնունդ տուաւ ազգային-քաղաքական հեռահաս զարթօնքի մը, որուն դրական հետեւանքները դրսեւորուեցան ու տակաւին պիտի դրսեւորուին մեր ժողովուրդին բոլոր հատուածներուն մօտ, հայրենի հողերու վրայ, ներքին սփիւռքի մէջ թէ՛ արտասահմանի տարածքին: Յաշս համայն աշխարհին, այդ զարթօնքը ցոյց տուաւ մեր ժողովուրդին պահանջատիրական միասնական դիմագիծը, իրրեւ ազգային մէկ եւ անբաժանելի միաւոր՝ հայութեան հաւաքական կամքը:

Երկրորդ՝ միամեայ այդ պայքարը, իր բոլոր դառն ու լեղի դասերով, հայութիւնը առաջնորդեց դէպի քաղաքական առաւել հասունութիւն, դէպի քաղաքականացում, թէ՛ հայրենիքի եւ թէ՛ սփիւռքի մէջ:

Եւ երրորդ՝ այդ պայքարը մեր իսկ համար եղաւ փորձաքար մը՝ ստուգելու մեր ժողովուրդին կարողականութիւններն ու կարելիութիւնները, ըստ այնմ յառաջ տանելու համար մեր ազգային ներքին վերակառուցումը՝ ի խնդիր մեր ժողովուրդի ազգային երազներու իրականացման:

Լեռնային Ղարաբաղի խորհրդարանին պատմական որոշումը մեզ ազգովին փոխադրեց քաղաքական իրական աշխատանքի մթնոլորտ: